# Գումարի վերադարձի քաղաքականություն

Սույն քաղաքականությունը սահմանում է **Dimordai.app** հարթակում կատարված վճարումների վերադարձի պայմանները:

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գումարի վերադարձը իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

1.2. Վճարումը կատարելուց հետո օգտատերը ստանում է համապատասխան ծառայություններից օգտվելու իրավունք՝ ընտրված սակագնի և ժամկետի համաձայն:

## 2. Գումարի վերադարձի դեպքեր

Գումարի վերադարձ կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

- վճարումը կատարվել է տեխնիկական սխալի հետևանքով,
- նույն ծառայության համար իրականացվել է կրկնակի վճարում,
- ծառայությունը հնարավոր չէ տրամադրել Dimordai.app-ի մեղքով,
- օրենքով նախատեսված այլ դեպքերում:

## 3. Գումարի վերադարձ չիրականացվող դեպքեր

Գումարի վերադարձ չի իրականացվում, եթե՝

- օգտատերը արդեն ստացել է ծառայության հասանելիություն և սկսել է օգտվել դրանից,
- օգտատերը հրաժարվում է ծառայությունից անձնական պատճառներով,
- ծառայությունը տրամադրվել է համաձայն պայմանագրի և հարթակի կանոնների:

## 4. Վերադարձի կարգ

4.1. Վերադարձի համար օգտատերը պետք է դիմում ներկայացնի հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ **info@dimord.ai**:

4.2. Դիմումը պետք է ներառի.

- անուն և ազգանուն,
- էլեկտրոնային հասցե,

- վճարման ամսաթիվ,
- պատվերի կամ վճարման տվյալներ,
- վերադարձի պատճառը:

4.3. Դիմումը քննարկվում է մինչև **10 աշխատանքային օրվա** ընթացքում:

## 5. Վճարման վերադարձ

Վճարման վերադարձի հաստատման դեպքում գումարը վերադարձվում է նույն վճարային միջոցին, որով կատարվել է վճարումը, եթե օրենքով կամ վճարային համակարգի կանոններով այլ բան նախատեսված չէ:

## 6. Կապ

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել՝

Էլ. փոստ՝ info@dimord.ai
Հեռախոս՝ +374 91 838145
Հասցե՝ Հ. Մադոյան փող., Վարդենիս, 1601, Գեղարքունիք, ՀՀ